

# Հոյս Կրթարարական հայոց

## Հայ ժողովրդի պատմության Ժամանակագրություն

- 1813 սեպտեմբեր 15** Ալեքսանդր Ի-ի հրովարտակը Վրաստանի հայերին, որով ցարը շնորհակալություն էր հայտնում նրանց՝ Վրաստանում ռուսական բանակին ցույց տված օգնության համար:
- հոկտեմբեր 12** Ղարաբաղի Գյուլիստան ամրոցում ստորագրվում է ռուս-պարսկական հաշտության պայմանագիրը, որի համաձայն Պարսկաստանը ճանաչում է Ղարաբաղի, Գյանջայի, Շաքի, Շիրվանի, Բաքվի, Դերբենդի, Ղուբայի, Թալիշի խանությունների, Լոռու, Փամբակի, Շամշադիմի, Ջանգեզուրի և Շորագյալի գավառների միացումը Ռուսաստանին:
- 1814 մայիս 14** Պարսկաստանի Յամադան քաղաքում ծնվեց Կարապետ Շահնազարյանը: (Վախճ. 1865թ.-ին, Կ. Պոլսում):
- սեպտեմբեր 8** Ծնվեց աշուղ Աղբար Աղդամը: (Վախճ. 1844թ.-ին):
- նոյեմբեր 25** Թեհրանում ստորագրվում է անգլո-պարսկական պայմանագիրը, որով Անգլիան խոստանում է նպաստել Գյուլիստանի պայմանագրի վերանայմանը:
- 1815 մայիս 12** Մոսկվայում սկսում է գործել Լազարյան ճեմարանը:
- նոյեմբեր 25** Նոր Զուղայում ծնվեց հայագետ Մկրտիչ Էմինը: (Վախճ. 1890թ.-ին, Մոսկվայում):
- նոյեմբեր 30** Կ. Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ Սերվիչեմ Սերովը Վիշենյանը: (Վախճ. 1887թ.):
- 1816 հունվար 5** Աստրախանում լույս է տեսնում «Արևելյան ծանուցմունք» շաբաթերը, որը «Վաստոշմիե իշվեստիյա» պարբերականի տարբերակն էր, արևելյան առաջին պարբերականը:
- դեկտեմբեր 2** Վենետիկ է գալիս ականավոր գրող Բայրոնը՝ հայոց լեզու սովորելու և ծանոթանալու հայ գրականությանը:
- 1817 մայիս 2** Կովկասյան գործերի գլխավոր իրամանատար, Կովկասի կառավարչական գորավար Երմոլովի գլխավորած Պարսկաստան մեկնող ռուսական միսիան ժամանում է Եջմիածին:
- հուլիս 29** Ծնվեց աշխարհահեշտակ ծովանկարիչ Յոհվաննես Այվազովսկին: (Վախճ. 1900թ.-ին):
- օգոստոս 1** Թեհրողսիյայում ծնվեց աշխարհահեշտակ ծովանկարիչ Յոհվաննես Այվազովսկին: (Վախճ. 1900թ.):
- 1818 փետրվար 11** Կ. Պոլսում ծնվեց պատմաբան Մատութա (Անտոն) Գարագաշյանը: (Վախճ. 1903թ.-ին):
- հունիս 5** Թիֆլիսում ծնվեց բանասեր Գևորգ Յախվերյանը: (Վախճ. 1861թ.-ին):
- հուլիս 4** Զեյրունը իրաժարվում է հարկ վճարել Մարաշի փաշային և ապստամբության դրոշ է բարձրացնում:
- 1819 փետրվար 3** Երևան է ժամանում ռուսականավոր գրող, դիվանագետ Ա. Ս. Գրիբոյեդովը, որը թեհրան էր մեկնում իրուս ռուսական միսիայի քարտուղար:
- օգոստոս 13** Թիֆլիսում ծնվեց գրական-հասարական գործիչ Պետրոս Շանջյանը: (Վախճ. 1899թ.-ին):
- սեպտեմբեր 23** Կեսարիայի Էնքերէ գյուղում ծնվեց թժիկ, լեզվագետ, հասարակական-քաղաքական գործիչ Նահապետ Ռուսինյանը: (Վախճ. 1876թ.-ին):
- 1820 հունվար 17** Թեհրանից վերադարձալիս Եջմիածին է ժամանում Ա. Ս. Գրիբոյեդովը, որտեղ և մնում է մինչև հունվարի 19-ը:
- փետրվար 19** Կ. Պոլսում ծնվեց պատմաբան, հայագետ Յովսեփ Գարեջանը: (Վախճ. 1882թ.-ին):
- ապրիլ 4** Վանի Այգեստան քաղամասում ծնվեց հայ հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային գործիչ Մկրտիչ Խրիմյանը (Խրիմյան Յայրիկ): (Վախճ. 1907թ.-ին, Եջմիածնում):
- հուլիս 6** Պոլսում ծնվեց մեծ հայագետ Ղևոնդ Ալիշանը: (Վախճ. 1901թ.-ին, Վենետիկում):
- օգոստոս 8** Կ. Պոլսի հայ արհեստավորների ցույցը, որը ծնշվում է բուրգական իշխանությունների կողմից:
- սեպտեմբեր 18** Յակասուլքանական ցույցին մասնակցելու մեղադրանքով մի խումբ հայեր (կեսարացի Յակոբը, Գրիգոր Սաքայանը, Դելի Բաղդասարը և այլն) մահապատժի են Ենթարկվում Կ. Պոլսում:
- սեպտեմբեր 18** Զայուռությունիայում ծնվեց տպարանատեր, հրատարակիչ Յամիկ Արամյանը: (Վախճ. 1878թ.-ին):
- 1821 ապրիլ 7** Ակսվում է Յունաստանի ազգային-ազգատագրական շարժումը՝ ուղղված օսմանյան միապետության դեմ:
- 1822 հուլիս 31** Ծնվեց հայ գրող և հրետոր Ծերենցը: (Վախճ. 1888թ.-ին):
- սեպտեմբեր 16** Կ. Պոլսում ծնվեց հայ նշանավոր վիպասան, հրապարակախոս Ծերենցը՝ Յովսեփ Շիշմանյան: (Վախճ. 1888թ.-ին, Թիֆլիսում):
- 1823 մարտ 13** Կարինում կնքվում է թուրքական հաշտության պայմանագիրը, որով Բայազետ քաղաքը կրկին վերադարձվում է Թուրքիային:
- հուլիս 4** Կ. Պոլսում ծնվեց Գրիգոր Աղաթոնյանը (Աղաթոն): (Վախճ. 1868թ.-ին):
- օգոստոս 11** Կ. Պոլսում ծնվեց պատմաբան, աշխարհագետ, բանասեր Մանվել Քաջունին: (Վախճ. 1903թ.-ին):
- նոյեմբեր 18** Կ. Պոլսում վախճանվեց պատմաբան Միքայել Չամչյանը: (Ծնվ. 1738թ.-ին):
- 1824 հունվար 28** Մադրասում վախճանվեց «Ազդարարի» խմբագիր Յարություն Շմավոնյանը: (Ծնվ. 1750թ., Իրանի Շիրազ քաղաքում):
- դեկտեմբեր 1** Թիֆլիսում բացվեց Ներսիսյան դպրոցը (շարունակեց գործել մինչև 1924թ.):
- 1825 հունիս 29** Թիֆլիսում ծնվեց դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանը: (Վախճ. 1912թ.-ին):
- դեկտեմբեր 14** Կեսարիստների ապստամբությունը Պետերբուրգում:
- դեկտեմբեր 14** Զայուռությունիայում ծնվեց արևանահայոց հրապարակախոս և քաղաքական գործիչ Ստեփան Ուկանյանը: (Վախճ. 1901թ.-ին):
- 1826 փետրվար 27** Ծնվեց հայտնի նկարիչ, արվեստի տեսաբան Վարդգես Սուրենյանը: (Վախճ. 1921թ.-ին):
- հունիս 15** Սուլթան Մահմուդ II-ի հրամանով Եմիչերիական գործը ոչնչացվում է Կ. Պոլսում, ապա և գավառներում:
- հուլիս 16** Պարսկական գործերը ներխուժեցին Ղարաբաղ:
- հուլիս 16** Պարսկական գործերը ներխուժեցին Են Ղարաբաղ, Շորագյալ և Փամբակ. սկսվում է ռուսակական երկրորդ պատերազմը:
- հուլիս 25** Շուշի բերդի երկու ամիս տևողությամբ հերոսական պաշտպանության սկիզբը:

(Ծարումակելի)

# Լուրեր

## Իրանահայ համայնք

Իրանահայ լուսանկարիչների  
հաջողությունը

Ս.Թ. մարտի 11-ից 17-ը կայացել է Իրանի տարեկան ընդհանուր լուսանկարչական ցուցահանդեսը, որը կազմակերպվել էր Ռաշտ քաղաքի երիտասարդական ֆիլմարտեստի կենտրոնի միջոցով։ Սույն միջոցառմանը Իրանի 16 քաղաքներից 217 լուսանկարիչ ուղարկել էին 1275 լուսանկարներ, որոնցից հինգհոգանոց գնահատող հանձնաժողովը ընտրել էր 53 լուսանկարներ եւ դրեւ ցուցադրության։ Լավագոյնների շարքում էր իրանահայ լուսանկարիչ Րաֆֆի Չովհաննիսյանի գործը, որը մի պատկեր է նոր Բուրաստան գերեզմանատնից։ Ընտրած այս լուսանկարին յուրահատուկ անորդադրձ է ունեցել ցուցահանդեսի կենտրոնի տնօրին պրն. Ֆարհադ Սեհրանֆարը, որի նյութը լույս է տեսել նոյն առիթով հրատարակված «Ֆարասուև ֆասելե» (Տարածությունից այն կողմ) վերտառությունը կրող գեղարվեստական մի հատորի մեջ։



## Իրան

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ  
ԻՐԱՆԱՅԱՍՏԱՆ ԳԱԶԱՏԱՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՍԸ

### Սակայն կնայաստի միջին բիզնեսի զարգացմանը Հայաստանում

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) նախագահ Ժան Լենյերի կարծիքով Հայաստանում առաջընթաց կա, բայց կան նաեւ դժվարություններ։ Զարգացման մակարդակը Հայաստանում ցածր է, իսկ աղքատությունը՝ տարածված։ ՎԶԵԲի գործունեության նպատակը Հայաստանում մասնավոր հատվածի զարգացմանը նպաստելն ու նոր աշխատատեղի ստեղծումը խթանելն է։ Բանկի Հայաստանում գործելու երկրորդ ուղղությունը, որի մասին երեկ «Արմենիա» իյուրանցում հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ տեղեկացրեց նրա նախագահը, հիպոթեկային ֆինանսավորումն է։ Շարունակվելու են ընդլայնվել կապեր բանկային հանակարգի հետ։ Որդեգրվելու են նոր մեխանիզմներ։ Մասնավորապես իրականացվելու են 0,5 մլն դոլարից մինչեւ 2 մլն դոլար երկարաժամկետ վարկային ծրագրեր։ ՎԶԵԲի վարկային աջակցությունն ուղղվելու է միջին բիզնեսին, գլխավորապես արտադրողներին։ Դրանք կլինեն նախեւարաջ գյուղատնտեսության, ինչպես նաեւ բարձր տեխնոլոգիաների, հանքարդյունաբերության, գրոսաշրջության, առեւտրի ոլորտների

ընկերությունները։ Վարկավորումն իրականացվելու է հայկական բանկերի միջոցով։

Այս հարցին, թե ինչքա՞ն են Հայաստանում եվրոպական բանկի վարկերի ծավալները, Ժան Լենյերը պատասխանեց, որ անցյալ տարի ներդրվել է 6 մլն եվր, այս տարի կներդրվի 10և12 մլն դոլար, իսկ եկող տարի հավանաբար 20 մլն դոլար։ Ներդրումները կատարվեն տարբեր ծեւերով։ Կինեն ուղղակի ներդրումներ, որի շնորհիվ ՎԶԵԲն ծեւք կրերի ծեռնարկությունների բաժնետոմսերի մի մասը։ Կտրվեն նաև երկարաժամկետ, կարճաժամկետ վարկեր կամ վարկային երաշխիքներ։

Եվրարանկը մտադիր է Հայաստանում ստեղծել հիմնադրամ, խթանելու համար այլընտրանքային էներգետիկայի զարգացումը։ այդ թվում փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը։ Հիմնադրամի ստեղծնանը անենայն հավանականությամբ կմասնակցի նաև Համաշխարհային բանկը կամ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը։ Այնուհետեւ Ժան Լենյերն ընդգծեց, որ իրենք գործելու են ոչ միայն երեւանում, այլև հանրապետության ողջ տարածքում։ Այդ նպատակով ամրապնդվելու է ՎԶԵԲի եվրոպական գործենյակը։

Բանկի նախագահը հայտնեց, որ տեղյակ է աստոմակայանի փակման քննարկումներին, բայց դրան չի մասնակցում։ ՎԶԵԲն չի մասնակցելու նաև Իրանի Հայաստան գազատարի ֆինանսավորմանը։

Նշելով, որ Եվրոպական բանկը գործում է 27 երկրներում, Ժան Լենյերը ասաց, դրանցից յուրաքանչյուրն ունի իր խնդիրները, իրենք նկատի են առնում տեղական առանձնահատկությունները։ Անդրկովկասի երկրներն այս առումով նոյնպես բացառություն չեն, սակայն ընդհանուրն այն է, որ բոլոր երկրներում պետք է զարգացնել փոքր եւ միջին ծեռնարկությունները։

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## Հայաստան



ՊԱՏՄԱԿԱՆ  
ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՆՅ ՆՎԻՐՎԱԾ  
ԱՌԱՋԻՆ  
ԳԻՏԱՌՈՂՈՎԸ

Գիտությունների  
ազգային  
ակադեմիայի  
պատմության  
ինստիտուտը

հայագիտական միջազգային համաժողովից մեկ ամիս անց, անցյալ տարվա նոյեմբերին հրավիրեց «Հայոց հիմնադրամային» գիտաժողովը, իսկ այս տարվա հունիսի 17և18եր կանցկացնի պատմական ժողովրդագրությանը նվիրված գիտաժողով՝ նվիրված 1904 թվականի Սասունի ապստամբության 100ամյակին։

«Հայ իրականության մեջ պատմագիտության կարեւոր բնագավառներից մեկին՝ պատմական ժողովրդագրությանը նվիրված առաջին գիտաժողովը տեղի կունենա, որի անհրաժեշտությունը չափազան մեծ է։ Հայոց պատմությունն ի սկզբանե խեղաքյուրվել է անենից առաջ պատմական ժողովրդագրության

տեսանկյունից: Ժողովրդագրական զարգացումների ամբողջ շղթան ուսումնասիրելը մեզ համար քաղաքական նշանակություն ունի», ասաց պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը:

Դին Հայաստանի ժողովրդագրական պատկեր, հայ ժողովրդի կազմավորման ընթացք, Եկվորությա՞ն, թե՝ բնիկության իմանականիր, Ուրարտու պետության էրնիկ բնութագիր, այս հարցերի կողքին կրնարկվեն շատ այլ հարցեր, որոնց վերաբերյալ գեկուցումներ կկարդան անվանի հնագետներ, պատմաբաններ, ազգագրագետներ:

Գիտաժողովի կարեւորագույն խնդիրներից մեկը հին եւ միջնադարյան, նոր եւ նորագույն հայոց պատմության էրնիկ իմանքի վերհանումն է, հստակորեն ցույց տալու համար, որ հայերն այս տարածաշրջանում ի սկզբանե գերակշռող էրնիկ տարրն են եղել: Պրա Մելքոնյանն ավելացրեց, որ անկախ տարածաշրջանում տեղի ունեցած ոչ հայանապատ էրնոգործներացներից, հայերը մշտապես գերակշռող դեր են ունեցել եւ Հայկական լեռնաշխարհի պատմության ու մշակույթի հիմնական կրողն են, ինչն ամեն գնով փորձում են հերքել աղործեանցի եւ թուրք պատմաբանները: Պատահական չէ, որ այսօր Աղրեցանում պետական ամենաբարձր մակարդակով հնչում են հայտարարություններ, թե հայերն առհասարակ պետականություն չեն ունեցել: Հայկական լեռնաշխարհի էրնիկ դաշտը, որը նրանք կասկածի տակ են դնում, թուրքերը բերում հասցնում են մինչեւ 1915 թվականի ցեղասպանության շրջանը:

Գիտաժողովի նյութերի իման վրա կստեղծվի Հայաստանի պատմական ժողովրդագրության դասագիրք՝ մեզանում մոռացված այս կարեւոր բնագավառը ճանաչելի դարձնելու համար:

ՈՈՒՁԱԾ ՊՈՂՈՍՅԱՆ

## Հայոց Սիյուռը

### Հանդիսություն Սոնրեալում

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Մոնրեալի «Հորիզոն» շաբաթերի իմանադրման 25-ամյակը պատեհ առիթ էր հայ մտքի ու գրչի մշակի աշխատանքը յուրահատուկ համահսությամբ գնահատելու համար:

Այդ կապակցությամբ պատվորեր են ստացել շաբաթերի իմանադիր կազմն ու նրա երկարամյա աշխատակիցները:

Հանդիսությունը հովանավորել է կիլիկյան թեմի առաջնորդ տեր Խաչակ արք. Հակոբյանը:

Հորեյանական միջոցառմանը ներկա են եղել առաջնորդ սրբազն հայրը, Բերայի թեմի առաջնորդ Սուրեն արք.

Գարարոյանը, վերապատվելի Սիեր Խաչիկյանը, Կանադայում ՀՀ դեսպան Արա Պապյանը, ՀՅԴ Բյուրոյի անդամ Հակոբ Տեր-Խաչատուրյանը, ՀՅԴ Կանադայի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Վաղարշ Երամճյանը եւ կազմի անդամներ, Շրջանային Հայ Դատի հանձնախմբի, ՀՅԴ Մոնրեալի եւ Լավալի «Միհրան Փափազյան» եւ «Սարգս Զեյթյան» կոմիտեների ներկայացուցիչներ, Համագօյակին եւ ՀՕՄ-ի շրջանային ու տեղական ներկայացուցիչներ, ազգային կառույցների եւ ուղեկից միությունների ներկայացուցիչներ, Ստեֆան Դինը, Նուշիկ Էլոյանը եւ «Հորիզոն» շաբաթերի բազմաթիվ բարեկամներ:

Հորեյանական համահսության պատգամախոսը եղել է Ֆրանսիայից հատուկ հրավիրված Հակոբ Պալյանը:

## Միջազգային

Ֆրանսիայիները դեմ են Թուրքիայի անդամակցությանը ԵՄ-ին

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Ֆրանսիայիները դեմ են Թուրքիայի անդամակցությանը Եվրամիությանը, սակայն կարող են փոխել իրենց կարծիքը, եթե Անկարան ճանաչի Հայոց ցեղասպանությունը:

Այդ մասին հայտնում է իւ դը Ֆրանսի հայկական համայնքի Այր Բմ երկեցու ռադիոն՝ ներկայացնելով Լուի Հարիս ինստիտուտի անցկացրած հարցախույզի տվյալները: ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությանը կողմէ ֆրանսիայիների 39 տոկոսը, դեմ՝ 53 տոկոսը: Բայց հարցադրումը մի քիչ փոխելու դեպքում՝ «Համաձայն Ե՞թ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությանը, եթե նա ճանաչի Հայոց ցեղասպանությունը» հարցին դրական է պատասխանել հարցվողների 45 տոկոսը, եւ միայն 49 տոկոսն է դարձյալ դեմ: Այս դեպքում, եթե Եվրոպական երկրների մեջ մասը համաձայնություն տա ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությանը, ֆրանսիայիների 62 տոկոսը գտնում է, որ Ֆրանսիան կարող է օգտագործել վետոյի իր իրավունքը:

Այս հարցախույզն անցկացվել է 2004 թվականի ապրիլի 23-24-ը ըստ մշակված մերորդ՝ հարցվել է 1006 չափահաս քաղաքացի:

Թթիլսին նոր քաղաքական կարգավիճակ է առաջարկելու Արխազիային

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Վրաստանի ազգային անվտանգության խորհուրդը ավարտում է Արխազիայի նոր քաղաքական կարգավիճակի նախագծի մշակումը, այն կներկայացվի «ամենամուտ ժամանակներս»: Այդ մասին, պատասխանելով ԻՏՏՈ-ՏԱՍՍ-ի թրակցի հարցին, հայտարարել է Վրաստանի հակամարտությունների կարգավորման հարցերով պետական նախարար Գերոգի Խամենդրավան: Նա մասնակցում է Թթիլսին եւ Սուխումի ներկայացուցիչների այսօր ՍԱԿ-ի հովանու ներքո սկսված երկողմ հանդիպմանը:

«Մենք Արխազիայի քաղաքական ապագան տեսնում ենք միասնական վրացական պետության կազմում, եւ նոր նախագիծը հավանաբար կրավարարի արխազական կողմին», -ընդգծել է պետականարարը:

Բանակցությունները, շարունակել է նա, նպատականդված կլինեն անվտանգության երկողմ միջոցառումների ապահովմանը, ինչը կօգնի «մեղմելու հակամարտող կողմերի միջև առկա լարվածությունը»:

Բացի այդ, նշել է Խամենդրավան, կրնարկվեն Արխազիայի Գալիի շրջան գաղթականների վերաբանական հարցը եւ կողորի կիրճի իրադրությունը: Իր հերթին Արխազիայի արտաքին գործերի նախարար Սերգեյ Շամբան հայտարարել է, որ նախեւառաջ անհրաժեշտ է «պատերազմ թույլ չտալու միջոցներ մշակել»: «Աջարական իրադրություններից հետո հասարակության մեջ տագնապակի տրամադրություններ են տիրում, եւ մենք պետք ենք քանակական այդ», - պարզաբանել է Սերգեյ Շամբան:

**ԹՈՒՐՅԱԿԱՆ ՏՊԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԵՌԱՆՈՒՄ Է  
ԱՊՐԵԱՆԻՑ**

Բարվում ոչ այնքան հայտնի «Քաղաքացիական համերաշխություն» թերթը գրում է, որ թուրքական ՏՊԱԾ ընկերությունը հեռանում է Աղրբեջանից՝ վաճառելով «Ազերիկարայկայունեցի» նախագծում իր ունեցած բաժնենասը, հաղորդում է ռուսական «Ռեզնում» գործակալությունը: Թերթի կարծիքով, թուրքական ընկերության հեռանալը պայմանավորված է Կիպրոսի հարցում Բարվի դիրքորոշմամբ:

Դիշեցնենք, որ իշխան Ալիեւը Անկարայում ակնարկել էր Հյուսիսային Կիպրոսի չժամանակած հանրապետության ճանաչման մասին, եթե ապրիլի 24ին՝ կղզու վերամիավորման հանրաքվեն տապալվի: Փաստորեն, Ալիեւը չկատարեց խոստումը: Ավելին Եվրախորհրդում աղրբեջանական պատվիրակությունը չնախակցեց այն քվեարկությանը, որով պետք է հաստատվեր կամ մերժվեր կիպրոսի թուրքերի առանձին մասնակցությունը ԵԽՍՎ աշխատանքներին: Սա Թուրքիայում բողոքի ալիք բարձրացրեց ընդդեմ Բարվի իշխանությունների:

Տակավին հավաստի չէ, արդյոք թուրքական ընկերությունը հեռանում է Աղրբեջանից: Սակայն փաստ է, որ վերջին տարիներին թուրքական մի շարք ընկերություններ լրել են Աղրբեջանի շուկան պատճառաբանելով այս երկրում առկա ոչ բարենպաստ իրավական դաշտը բիզնեսի համար: Դիշեցնենք նաեւ, որ վերջերս Աղրբեջանում իր մասնաճյուղը փակեց բրիտանական հեղինակավոր HSBC բանկը:

**ԱՊՐԵԱՆՈՒՄ ԶԵՐԱԿԱՎԵԼ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՁԱԳՐԵՐ  
ՊԱՏՐԱՍՏՈՂ ԽՈՒՄԲ**

ԲԱՐՈՒ, 19 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Օրեւս Բարվում ձերբակալվել է հանցախումբ, որը պատրաստում էր կեղծ հայկական անձնագրեր, որոնք Աղրբեջանի քաղաքացիներն օգտագործում էին, որպեսզի արտասահմանում ապրելու հնարավորություն ստանան: Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչությունը ԱթՎ հեռուստաընկերությանը հայտնել են, որ ձերբակալվել են Սումգայիթի բնակիչներ Յավեր Միրզելը, Եթիբար Թափիթգովը եւ բաքվեցի Քենուլ Ոուստանվան, որոնք կասկածվում են աղրբեջանցիների համար, որոնք ցանկանում են իրեւ հայեր արտասահման տեղափոխվել մշտական բնակության, կեղծ փաստաթղթեր պատրաստելու մեջ: Զեռք թերելով այդպիսի փաստաթղթեր, աղրբեջանցիները մեկնում են արտասահման, որտեղ խոսում են Աղրբեջանում իրենց իրավունքների խախտումների եւ այնտեղ ապրելու անհնարինության մասին: Մինչ օրս հանցախումբի անդամների կողմից կեղծ փաստաթղթեր են պատրաստվել մի քանի մարդկանց համար, որոնցից նրանք դրա դիմաց վեցորել են 5000Լական ԱՄՆ դոլար: Ձերբակալվածները լրիվ խոստովանել են իրենց մերքը: Նրանց գրասենյակից հայտնաբերվել են տասնյակ կեղծ փաստաթղթեր: Փաստի առթիվ հարուցված է քրեական գործ: Բարվի «525» թերթը հիշեցնում է, որ նախկինում եւս շատ աղրբեջանցիներ, որոնք ցանկացել են տեղափոխվել Եվրոպական Երկրներ, ներկայացել են իրեւ հայեր: Միգրանտների հրավարանական օգնության կենտրոնի դեկանը Ալիեւը ավելի վաղ «525» թերթին տված հարցագրույցում նշել էր, որ վերջին տարիներին այդ դեպքերը ավելի են շատանում:

**Հասարակական  
Թուրքիայի ռազմական նոր  
հայեցակարգը**

**Արմեն ԱՅՎԱԶՅԱՆ**

Մինչեւ ԽՍՀՄ փլուզումը, Թուրքիայի ռազմական հայեցակարգն ուներ իհմնականում պաշտպանական բնույթ եւ կառուցված էր սովորական սպառագինություններով վարչելիք պատերազմում ուժերի հաշվարկմերի վրա: Միջուկային գենքի կիրառման հետ կապված հարցերը վերապահված էին ՍԱՏ-ին կամ ԱՍՄ-ին:

Սարդ պատերազմի տարիներին ՍԱՏ-ում բանավիճում էին այն մասին, թե Խորհրդային Միության եւ Վարչավայի պայմանագրի երկրների բանակների հարձակման դեպքում թուրքական զորքերը որքա՞ն տարածք կվարութանան պաշտպանել՝ մինչեւ դաշնակից ուժերն անցնեն հակագրոհի: Թուրք գինվորականները հույս ունեին դիմագրավել հակառակորդին սահմանին եւ այնուհետեւ կազմակերպված նահանջել: Աներիկյան ծրագրավորումները պակաս լավատես էին: 1950-ական թթ. վերջի հաշվարկմերով թուրքերն արագ շարուցելու էին մինչեւ Միջերկրական ծով՝ Խկենդերունի շրջանը: Թեեւ այս հաշվարկները ժամանակի հետ փոփոխվում էին, 1990 թ. թուրքական գլխավոր շտաբը տակավին անվտանգության հիմնական խնդիր էր հանրարում երկրի տարածքի բազմաճակատ պաշտպանությունը:

1990-ական թթ. առաջին կեսին այս մտայնությունը դեռ չէր վերանայվել: 1997 թ. թուրք ռազմական մեկնաբանները, հիմնվելով Ոուստատանի, Յունաստանի, Իրաքի, Իրանի եւ Միջիայի կովի դաշտ սովորական ուժեր համելու կարողությունների վրա եւ նրանց վերագրելով տարածքային նկրտումներ՝ այդ պետությունները համարում էին անվտանգության գլխավոր սպառնալիքներ: ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպան Շյուլքու Ելերդաղը, իր «Երկուսուկես պատերազմի ռազմավարություն» հայտնի հոդվածում արտահայտելով ռազմական գերատեսչության տեսակետները, ընդգծում էր, որ Թուրքիան պետք է ծրագրի եւ պատրաստ լինի լայնածավալ պատերազմ մեր միաժամանակ Երկու տարբեր ճակատներով (օրինակ՝ Միջիայի եւ Յունաստանի դեմ) ու նեկ ներքին պատերազմ՝ քրդական ապստամբության դեմ:

Այս հայեցակարգով թուրքական գինված ուժերը պետք է կազմակերպվեին, նարզվեին եւ սպառագինվեին ունենալով Երկու իհմնական խնդիր:

ա) Թուրքիայի ցամաքային եւ օդային ուժերը պետք է կարողանային կասեցնել զրահատանկային հումքու ներխուժումներն արեւելքից (ԽՍՀՄ/Ոուստատան) ու հարավից (Միջիա, Իրաք), ապա անցնեին խոր էշելնային պաշտպանության:

բ) Բանակը եւ ներքին զորքերը (ժամանակամիջության պատրաստ լինելին զարթուղարական պատերազմ՝ հենվելով ամրացված շրջանների եւ արագ արձագանքնամարդ շարժուն ուժերի վրա: Նավատորմին վերապահված էր Բուֆորի նեղուցի հսկողությունը:

# Հոգևորականութեաբ

Այսպիսով՝ զինված ուժերից պահանջվում էր մարտավարական շարժունություն, մինչեւ ռազմավարական շարժունությունը եւ թշնամու խորը հարվածելու կարողությունը պակաս կարեւոր էին համարվում, քանզի ենթադրվում էր, որ պատերազմն ընթանալու է Թուրքիայի տարածքում։ Մինչեւ վերջերս Թուրքիայի զինվորականությունը, հավատարիմ մնալով քենալ Աթաթօւրքի առաջադրած այն տեսակետին, ըստ որի՝ Թուրքիայի ճակատագիրը կապված է միմիայն Արեւմուտքի հետ, մահմեդական արեւելքում ազդեցությունը մեծացնելու փորձերը գնահատում էր իրեւ իսլամականների հետադիմական ձգումներ, որոնք կարող են վտանգել երկրի արեւմտամետ ուղին։

Սակայն 1999 թ. սկզբին պաշտպանության նախարարությունը հրապարակեց «Սպիտակ տետրակ. պաշտպանություն 1998» պաշտոնական տեղեկագիրը, որում, շեղվելով արտաքին քաղաքականության 70-ամյա ավանդություց, Թուրքիան դիտվում է արդեն իրեւ «Եվրասիական երկիր», որը «պարտավոր է պահպանելու ու ընդունել կապերը եւ Արեւմուտքի, եւ Արեւելքի հետ»։ Տեղեկագիրը շարադրում է նաև Թուրքիայի ռազմական քաղաքականության պաշտոնական գլխավոր սկզբունքները։

1) Զապում (deterrence). ռազմական այնպիսի ուժի պահպանում, որն ի զրոյ է սաստել արտաքին եւ ներքին սպառնալիքներ հարուցողներին։

2) Կոլեկտիվ անվտանգություն. գործուն մասնակցություն միջազգային եւ տարածաշրջանային դաշինքների եւ կազմակերպությունների աշխատանքներին հատկապես ՆԱՏՕ-ի եւ Արեւմտաեվրոպական միության շրջանակներում։

3) Առաջ մղված պաշտպանություն (forward defense). հնարավոր զավթողականության (ազրեսիայի) բովանդակությունն առավել վաղ հայտնաբերելու եւ այն դրսից կանխելու կարողություն։

4) «Խաղաղարարություն»։ հակամարտություններին միջամտելու եւ խաղաղարար գործողություններին մասնակցելու կարողություն։

Այս դրույթներին պետք է ավելացնել նաև Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Հուսեին Կիվրիկօղլուի «նախահարձակ ճակատամարտի» (forward engagement) դրույթը, ըստ որի՝ զինված ուժերը պետք է պատրաստ լինեն կանխելու Թուրքիայի շահերի դեմ եղած սպառնալիքները՝ մինչեւ դրանց Թուրքիայի սահմաններից ներս քափանցնելը։ Կիվրիկօղլուի միտքը պարզաբանված է «Սպիտակ գրքում»։

«2000-ական թթ. ընդհանուր օպերատիվ հայեցակարգով պահանջվում է վերահսկելի դարձնել այն շրջանը, որտեղ գտնվում է ազրեսորը եւ նրան պարտության մատուցներուն։ Այդ նապատակին հասնելու համար կարեւոր են գերակշռ կրակյան ուժով եւ զորաշրժային (մանեւրային) կարողություններով զորքեր ունենալը, ազրեսորի անենարույլ տեղի ծցտումը, նշանակետերի ճանաչումն ու հայտնաբերումը, նախազգուշացման համակարգերի, զորքերի դեկավարման, էլեկտրոնային պատերազմի եւ կապի ու տեղեկատվական համակարգերի համադրված եւ արդյունավետ կիրառումը»։ Այսպիսով՝ անգամ պաշտոնական փաստաթղթերում բուրքական հրամանատարությունը ծրագրում է ապագա պատերազմները մոել Թուրքիայի սահմաններից դուրս։ ԱՄՆ-ի բանակի հեղինակավոր «Փարամիթը»

հանդեսում վերլուծելով այս նյութերը՝ նոյն եզրակացության է հանգում թուրքական զինվորականության հարցերով մասնագիտացած մի հեղինակ։ «Անկարան ընդունել է գործողությունների այնպիսի մի հայեցակարգ, որով զինվորականությունը զգտելու է վերացնել Թուրքիայի դեմ սպառնալիքները նրա հիմքնիշխան տարածքից դուրս։ Թուրքական զինված ուժերը ոչ միայն ընդունակ են, այլև ցանկանում են գործել իրենց սահմաններից դուրս։ Այս նապատակին են ուղղված նաև թուրքական զինված ուժերի վերացնեման չափազանց հավակնությունը ծրագրերը։ Դեռևս 1998 թ. օգոստոսին, մինչեւ գլխավոր շտաբի պետ նշանակվելը, Թուրքիայի ցամաքային զորքերի հրամանատար գեներալ Կիվրիկօղլուն, շեշտելով, որ «զորքերի արագ ծավալումը հեռավոր շրջաններուն կենսական նշանակություն ունի այն ռիսկերի եւ պատասխանատվությունների համար, որ մենք հնարավոր է ստանձնենք», այնուհետեւ շարադրեց արդիականացման մի ծրագիր, որը Թուրքիային պետք է ընձեռեր համատեղ գործողությունների ռազմավարական շարժունություն եւ երկրի սահմաններից դուրս հարված հասցելու կարողություն։

Այդ ծրագրի հրականացումը, գեներալ Կիվրիկօղլուի հավաստմամբ, կրերի նրան, որ թուրքական բանակը կունենա «այնպիսի զենքերի համակարգեր, որոնք առավելություն կիաստատեն թշնամու վրա՝ նրա տարածքի խոր թիկունքում, կվիրառեն «խելացի» զինանքներ՝ ներառյալ «Երկիր-Երկիր» հեռահար հրթիններ՝ ապահովելով կրակակետերի շարունակական ու լուրջ քողարկումը։

Բանակը նաև կունենա նորագույն զրահով պատված արդիական տանկեր եւ արդյունավետ հակատանկային զենքերի համակարգեր, դրանց կից հակաղային պաշտպանության միջոցներ, ինչպես նաև դեսանտային զորքեր տեղափոխող ուղղաթիռներ... Տեղեկատվության հավաքման համակարգերը հնարավորություն կտան ստորաբաժանումներին բոլոր մակարդակներում հայտնաբերել, ճշտորշել եւ ճանաչել թշնամուն իրենց կարողության շառավիղի մեջ։

Ի մի բերենք։ Թուրքիայի ռազմավարական մտածողությունն այնպիսի վերափոխություն է ապրել, որ անգամ բոլոր եւ ամերիկացի վերլուծաբանները խոսուն են «նոր (ներ) օսմանյան օրակարգի» հաստատման մասին։ Կենտրոնական Ասիայից մինչեւ Բալկաններ գերիշխան դեռ ստանձնելու իր նոր օսմանյան դիրքորոշումները Թուրքիան առավել վտանգավոր է դարձել իր հարեւանների եւ առավել անկանխատեսելի դիրքորոշումների համար։

Յատկած «Պահանջրույթներ Յայաստանի ազգային անվտանգության» (Երևան, 2003թ.) աշխատությունը։

## Ընդլայնված Եվրոպան շարժում է Թուրքիայի նախանձը

Արամ ԱնԱՅԱՑՅԱՆ

Նախորդ շաբաթվա համաշխարհային կարեւորագույն իրադարձությունը Եվրոպական միության հեռթական ըմբռայնումն էր։ Եվ այսպիս, մայիսի մեկից վերագրային այս կառույցի կազմը համալրվեց 10 նոր անդամներով։ Յատկանշական է, որ Եվրոպական ընդլայնման հեռթական ալիքից կրկին դուրս մնաց Թուրքիան, որը ԵՄ-ին անդամակցելու հարցը վաղուց արդեն դարձել է համապետական խնդիր եւ արտաքին քաղաքական առաջնայնություն։ Թուրքիայի անդամության հարցը

# Հոգևորականութեաբ

սերտորեն կապված է Կիպրոսյան խնդրի, քաղաքական համակարգի ժողովրդավարացման, մարդու եւ ազգային փորարամասնությունների իրավունքների պաշտպանության, տնտեսական զարգացման եւ այլ հիմնահարցերի հետ:

Եվրոպական ընդլայնման առաջին օրերի խանդավառությունը փոքր-ինչ մրագնվեց Կիպրոսի միավորնան հարցի շուրջ անցկացված հանրաքվեի ձախողմանք: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անանի առաջարկած նախագծի տապալման արդյունքում ԵՄ-ի կազմում ընդգրկվեց նիայն կղզու հարավային՝ հունական հատվածը: Կարելի է վստահաբար ասել, որ հանրաքվեի արդյունքները հիմարափություն առաջ բերեցին ոչ միայն ԵՄ-ում, կղզու թուրքական ինքնահօչակ հանրապետությունում, այլև Թուրքիայում: Հանրաքվեից մի քանի որ հետո Թուրքիայի վարչապետ էրդողանը, համագօգային հեռուստաելույթի ժամանակ, Կիպրոսի վերամիավորման շուրջ անցկացված հանրաքվեն համարեց պատճական, քանզի, քատ նրա, թուրքերն այս անգամ հանդես եկան որպես խաղաղության պաշտպաններ, ինչն անպայման պիտի գնահատվի միջազգային հանրության կողմից: Էրդողանը կոչ արեց նաեւ վերանայել այն «անարդար» արգելանքները, որ համաշխարհային հանրությունը կիրառել է Հյուսիսային Կիպրոսի նկատմամբ: Եվրոպան, իր հերթին, սկսել է ուղիներ փնտրել Հյուսիսային Կիպրոսի միջազգային մեկուսացումը հադրահարելու ուղղությամբ:

Ինչպես հաղորդում է «Աքշամ» օրաթերթը, ԵՄ-ի Եվրոպական խորհուրդը որոշում է ընդունել ինքնահօչակ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունում բացել ներկայացուցչություն: Այս ամենը չի կարող չխրտնեցնել Հյուսաստանի եւ Կիպրոսի իշխանություններին: Հյուսների մտահոգությունը պիտի հարուցի նաեւ այն, որ Անկարան շահարկում է կղզու վերամիավորման խնդրի շուրջ հնարավոր հաջորդ հանրաքվեի անցկացման հարցը:

Անկարայի հիմարափությունը բազմապատկիրմ է այն պարզ պատճառով, որ դեռեւ 1987-ին Եվրոպական համայնքին անդամության պաշտոնական խնդրանքով դիմած թուրքերից առաջ անցան միայն 1990-ականների սկզբին սոցիալիստական քանդված ճամբարից դուրս եկած կենտրոնական եւ արեւելյան երկրների պետությունները եւ ԽՍՀՄ-ի մաս հանդիսացած Լիտվան, Լատվիան ու Էստոնիան: ԵՄ-ն Թուրքիայի նկատմամբ վարում է ուրույն քաղաքական գիծ: Բրյուսելը վերջնականացն չի այրում հետդարձի կամուրջները, միեւնուն ժամանակ չի ցանկանում գրկարաց ընդունել նրան: Թուրքիայի անդամության հարցը ըննարկելիս Եվրոպացիները վկայակույն են դեռեւ 1990-ականների սկզբին հաստատված կոպենհագենյան չափանիշներին այս երկրի անհամապատասխանության փաստը: Իրականում դեռեւ 2002-ին պարզ էր, որ այս անգամ եւս թուրքերին վիճակված է նիայն դիտորդի դերը: Եվրոպական միության ընդլայնումը վերջին օրերի թուրքական մանուկի իրապարակումների առանցքային լուրն էր: Առաջատար թերթերի մայիսինեկյան խմբագրականները փաստում էին թուրքերի վիրափուկածությունը: «Հյուրիեթ» օրաթերթը ընդլայնված Եվրոպան անվանել էր կայսրություն, այլոց կարծիքով՝ կիրառվել էր երկակի ստանդարտ, եւ թուրքերը ընդլայնման հերթական ալիքից դուրս էին մնացել միջիայն Եվրոպացիների կանխակալ վերաբերմունքի պատճառով:

Թուրքական լրատվամիջոցները հաճամանորեն անդրադարձել են նաեւ Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի մանուկի ասուլիսին, որում նշվել էր, որ չնայած Եվրոպական միությունն աջակցում է Թուրքիայի անդամակցությանը, սակայն այդ հարցն ավելի պարզ կարող է դառնալ այս տարվա հոկտեմբերին, երբ վերջնականապես պատրաստ կլինի Եվրոպական հանձնաժողովի գեկույցը:

Ֆրանսիայի նախագահը նատնանշել էր երկու հնարավոր զարգացում կամ հանձնաժողովը կփաստի Անկարայի առաջխաղացումը եւ բոլոր անհրաժեշտ չափանիշների բավարարված լինելը, կամ էլ իրավիճակը կմնա անփոփոխ, եւ Անկարայի հետ բանակցություններ չեն սկսվի: Միեւնույն ժամանակ, Շիրակը նշեց, որ եթե անգամ Թուրքիան պատրաստ լինի նստել բանակցությունների սեղանի շուրջ, կպահանջվի ամենաքիչը 10-15 տարի, մինչեւ դառնա Եվրամիության լիիրավ անդամ:

Ուշագրավ է, որ ասուլիսի ընթացքում հնչեցվել է Հյայստանի համար առանցքային հարցադրում. որքանո՞վ կարող է Հյայոց ցեղասպանության ճանաչման հարցն ազդել Եվրոպամիությանը Թուրքիայի անդամակցության վրա: Ֆրանսիայի նախագահը կոչ էր արել այս հարցը լուծել երկողմ հարաբերությունների ծեւաչփով՝ նշելով, որ խնդիրը վերաբերում է միջիայն երկու պետությունների՝ Հյայստանին եւ Թուրքիային: Շիրակը նաեւ գոհունակություն էր հայտնել այն դրական գործներացի առնչությամբ, որ առկա է երեւանի եւ Անկարայի հարաբերություններում: Մեր կարծիքով, սակայն, թուրքերին այդքան ոգեւորած հայտարարությունը իրականում փաստում է, որ հարցը շրջանառվում է Եվրոպայի թուրքական քաղաքականության օրակարգում եւ լուրջ անհանգստություն է պատճառում թուրքերին: Նոյն օրը, ինչպես հաղորդում է «Աքշամ» օրաթերթը, Եվրոպական հանձնաժողովի խոսնակ Քեմփինենը, փորձելով մեղմել Ֆրանսիայի նախագահի հայտարարությունների հնարավոր բացասական արձագանքը, կարծիք էր հայտնել, որ Թուրքիայի առաջխաղացման մասին պատրաստվող գեկույցի վրա ժակ Շիրակի արտահայտած տեսակետը ոչ մի ազդեցություն չի ունենա: Իր հերթին, Եվրոպական հանձնաժողովի նախկին նախագահ ժակ Դելորն ասել էր, որ Թուրքիան, ինչպես մնացած բոլոր թեկնածու պետությունները, պիտի համապատասխանի կոպենհագենյան չափանիշներին: Այս իրավիճակում թուրքերին մնում է միջիայն զինվել համբերության (ԵՄ չափանիշներին համապատասխանելը հաշված ամիսների ընթացքում լուծելու խնդիր չէ) եւ սպասել Եվրոպամիության երրական ամնպաստ գեկույցին: Նոր անդամների ընդունելությունից հետո Բրյուսելը գրադաւոր է լինելու կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրների հետ ինտեգրացիայի խորացման հարցերով: Այս պարագայում Թուրքիայի հետ հարաբերություններում որեւէ անկանխատեսելի զարգացում անիրատեսական է: Թուրքիա-ԵՄ հարաբերությունների զարգացման դիմանիկան հուշում է, որ Եվրոպացիները գնալու են Անկարայի անդամության հարցի անընդհատ գգագման տրամաբանությամբ: Հյուսական Կիպրոսի Եվրոպամիության անդամակցելուց հետո թուրքերը ստիպված են լինելու ինտեգրացման իրենց բաժնի համար կիպրոսյան հարցում շատ ավելի բարձր գին վճարել:

## Մշակութային

### Վարդան Այգեկցի

#### 41. Առիտին նմանող աղլէսն ու գայլը

Առիտը սպասող վերցրեց աղլէսի եւ պատիրեց նրան.

- Երբ տեսնես, տւել է աչքս, ինձ իմաց արա, դա որսն սկսելու իմ նշանն է:

- Աղլէսը պիտի նշանն ասեր:

Եւ առիտը որս էր անում այդպէս : Ուրախանում էին նրանք ու երկուսով ուտում որսը:

Յպարտացաւ աղլէսը, դուրս եկաւ առիտի ծառայութիւնից եւ , գայլին դարձնելով իր սպասաւոր, սասում էնրան.

- Երբ հարցնեմ քեզ, աչքերիս մէջ արիւն կայ , դու կասես այօ , աչքերի մէջ շատ արիւն կայ:

Թիշ անց աղլէսը գայլին հարցնում է.

-Նայիր աչքերիս, արիւն կայ մէջ:

-Այօ , - պատախանում է գայլը,- աչքերի մէջ շատ արիւն կայ եւ թաճրագոյնն է:

Ուրախացաւ աղլէսը ու գնաց նստեց եղնիկների ճանապարհին: Երբ եղնիկներն եկան, աղլէսը վագեց նրանց ընդառաջ, ինչպէս սովորել էր առիտից: Բայց եղնիկները հարւածեցին իրենց սմբակներով աղլէսի գլխին, նա ջախջախւելով ընկաւ ուշագնաց:

Սոտեցաւ նրան գայլն ու ասաց.

-Վեր կաց, այժմ աւելի թաճրացաւ արիւնը քո աչքերի մէջ:

#### 42. Որսորդն ու կաքաւը

Որսորդը մի կաքաւ բռնեց եւ կամեցաւ մորթել նրան:

-Մի՛ նորդիր ինձ,- լացով աղաքց կաքաւը,- ես շատ կաքաւներ՝ խելահան անելով, կը բերեմ քեզ, որ բռնես:

-Այժմ կը մեռնես իմ ձեռքով,- սասաց արսորդը,- որովհետեւ քո սիրելիներին ու ազգականներին մահին ես մատնում:

#### 43. Նապաստակներն ու գորտերը

Նապատակներն իրար ասում են.

-Եկեք գնանք, ծովն ընկնենք, մեռնենք բոլորս, որովհետեւ թոյլ ենք ու անզեն, ես բոլոր կենդանիներն եւ հալածում են մէզ:

Ու գնացին

ճանապարհին հանդիպեցին գորտերի, որոնք տեսմելով նրանց, ծիչ արձակեցին ու փախան, թաքնւեցին նրանցից:

Նապատակները միխթարւեցին, փառք տւեցին Աստծուն, որ իրենց տկարագոյններն ել կան, ու վերադարձան ետ:

#### 44. Մարդն ու գայլը

Սի մարդ բռնել էր գայլին, ոտքերը կապել, եւ, բարձելով էշին, տանում էր տուն: Մարդիկ, տեսմելով նրան հարցնում են.

-Այդ ի՞նչ է, որ բարձել ես էշի:

-Տանում եմ տուն,- ասում է մարդը,- որ կրեն, եւ երեխաներս մի թիշ կշտանան:

-Ո՞վ տխմար,- ասում են մարդիկ,- դա ամբողջ աշխարհի կրանն է կտրել, դու դդան կրա՞ն ես տանում:

#### 45. Կաշառառու դաշտաւորն ու բղուղով իւղը

Սի մարդ գնաց քաղաքի դատաւորի մօտ եւ խոստացաւ.

-Քեզ մի բղուղ իւղ կը տամ, եթէ վաղը, երբ հակառակորդին հետ գամ դատի, ինձ արդարացնես:

Եւ միւս օրը, երբ եկան դատարան, դատաւորն արդարացրեց իւղ խոստացողին եւ դատաւմիոք գրելով, հանձնեց նրան:

Իւղ խոստացող մարդը բղուղի մէջ՝ մինչեւ բուկը, հարդ լցրեց, հարդի վրայ դրեց երկու-երեք շերեփ իւղ, բղուղի բերանը սերեկեց ու տարաւ յանձնեց դատաւորին: Սի քանի օր յետոյ դատաւորն ասում է իր սպասաւորին.

-Սիրոս իւղով բրինձ է ուզում, բեր այն մարդու բերած իւղը եւ բրինձ եկիր:

Սպասաւորը կրակ է վառում, թաւան դնում վրան, բերում է բղուղն առաջ, բաց անում եւ հենց որ գդալը խփում է մէջը, հարդ է դուրս գալիս: Դատաւորը գլխի է ընկնում, որ մարդը իրեն խարել է: Ասում է.

-Ոչի՞նչ, տեղը կը հանեմ:

Սի օր այդ մարդը անցնում էր դատաւորի դրան մոտով: Տեսնողը նրան, դատաւորը կանչում է, ասում.

-Ո՞վ մարդ, ոք դատաւածի մէջ, որ այն օրը յանձնեցի քեզ, մի բան պակաս եմ գրել, խեղճ մարդ ես, բեր ներս, աւելացնեմ, արպեսզի յետոյ քո հակառակորդը այլէս քեզ դատարան քարշ չտայ:

-Դատաւորի,- ասում է մարդը,- թէ պակաս բան կայ, բղուղի մէջ է պակաս, թէ չի իմ թղթում պակաս չկայ:

## ՇԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

-Լավ է թիշ, քան ոչինչ:

-Լեզու կա դեղ է, լեզու կա մկնեղէ է:

-Լեզուդ որ չլիներ, ագռավներն աչքերդ կիամեին:

-Լեզուն երկբերան է, մեկով աղոթում, մյուսով հայոյում է:

-Լեզուն մեկ է խոսում, հացն՝ երկու:

## ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

-Զրադացից ես եմ գալիս, ալրի մեջ դո՞ւ ես կորել:

-Զուրն իր ճանապարհը կգտնի:

-Սանդուղներով երկինք չես բարձրանա:

-Սոխն էլ է մրգի շարք անցել:

-Վարդ սիրողը փշի ծակոցին պետք է դիմանա:

## Ժամանց

### 1- Ուրախ անկյուն

Տարեց, սակայն վայելչագեղ մի կին դեղատուն է մտնում եւ հարցնում.

- Ի՞նչ ունեք ճերմակ մազերի համար:
- Մեծ յարգանք, տիկին:

\*\*\*

Երկու կին գրունում են իրենց շնիկների հետ: Նրանցից առաջինը իր շնիկին գովաբանելու համար ասում է.

- Իմ շնիկը արդեն կարողանում է լրագիր կարդալ:
- Գիտեմ, ինձ այդ մասին պատմել է իմ Փեղին, պատասխանում է երկրորդը:

### 2- Արդյոք գիտե՞ք

Մսի կոտըտները պատրաստ են, եթէ գողալով սեղմելու ժամանակ նրանից հոսում է թափանցիկ հիւթ: Կտրելու ժամանակ պատրաստ կոտըտները պետք է ունենան որ թէ վարդագոյն, այլ գորշ գոյն:

\*\*\*

Լյադրի թաղանթը հեշտ է հեռացնել, եթէ նախօրոք նրան մէկ րոպէով գցէք տաք ջրի մէջ:

\*\*\*

Լյադր շատ համեղ կը լինի, եթէ տապակելուց առաջ 2-3 ժամ պահել սարը կարի մէջ: Աղը պէտք անել տապակելու վերջում:

### 3. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1-

Ծնվում է նա,  
Բայց չի ծնում,  
Շատ բանում է  
Ու քիչ սնվում:

2-

ճանաչված է իր հավատարմությամբ,  
ճանաչված է իր նվիրվածությամբ:  
Խսկապես, որ նա ընկերն է մարդու,  
Բայց ոչ մարդկության:

3-

Մաքրասեր է,  
Մաքրակենցաղ,  
Լվացվում է հաճախակի,  
Սերը վագրի է նմանվում նա  
Սերը էլ՝ խարխուլ ճախարակի:

4-

Աղմկով գալիս է,  
Կծում է թաքուն,  
Թե սպանես, քո  
Արյունն ես թափում:

5-

Դերձակ չէ, բայց առանց ասեղ  
Ոչ ոք նրան դեռ չի տեսել:  
**Պատասխան. 1-Զորի 2- Շուն 3- Կատու 4- Մոժակ  
5- Ոզնի**

## Առողջապահական

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ  
ԴԵՂԱՏՈՄՄԵՐ

Ցնցուղատափի բուժնան համար առաջարկվում է հետեւյալ միջոցը. 1 լիտր եռացող ջրի մեջ լցնել 400 գ ծառի թեփ: Այնուհետեւ քամել եւ խմել բավականին տաք վիճակում՝ մեկ օրվա ընթացքում: Եփուկի համը տանելի դարձնելու համար ավելացնել բոված շաքար:

\*\*\*

Խիստ մրսածությունը եւ ուժեղ հազը բուժելու համար խորհուրդ է տրվում օգտագործել հետեւյալ դեղամիջոցը. 20 գ օշինդրը առնվազն 24 ժամ թրմե կես շիշ օղու մեջ եւ այնուհետեւ քննելուց առաջ ընդունել օրը 3 անգամ, ճաշի գդալով: Այս բուժամիջոցը երեխաների համար անթույլատրելի է:

\*\*\*

Հազը բուժելու համար առաջարկվում է հետեւյալ դեղամիջոցը. Վերցնել մի մեծ գլուխ սոխ, մաքրել, լվանալ, քերիչի վրա քերել եւ սագի ճարպ խառնելուց հետո այդ խառնուրդով շփել կրշբավանդակն ու վիզը: Այնուհետեւ, տաք փաթաթելուց հետո, առավոտյան, քաղցած վիճակում ճաշի գդալով ընդունել այդ խառնուրդը:

\*\*\*

Որպես հազի դեմ կիրառվող դեղամիջոց՝ հատկապես երեխաների համար, օգտագործել տարեկան բողիս հյութ: Վերցնել մաքրած տարեկան բողկը, քերիչի վրա քերել եւ հյութը քամել: Այնուհետեւ, 1 ճաշի գդալ մեղը խառնելուց հետո, ընդունել օրը 3-4 անգամ, երկու ճաշի գդալ՝ ուտելուց 15-20 րոպե առաջ:

\*\*\*

Զվի դեղնուցն ու շաքարավազը միասին լավ հարել, դարձնել «գողլի-մողլի» եւ որպես հազի բուժնան դեղամիջոց, ընդունել քացած վիճակում:

